

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ 1995Թ.

ՆՈՅՄԲԵՐԻ 3-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ստեղծելու մասին 1995թ. նոյեմբերի 3-ի համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր),

ղեկավարվելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ստեղծելու մասին 1995թ. նոյեմբերի 3-ի համաձայնագրի 8-րդ հոդվածով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

## ՀՈՒՎԱԾ 1

1. Կատարել փոփոխություն Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ստեղծելու մասին 1995 թ. նոյեմբերի 3-ի համաձայնագրի 5-րդ հոդվածում եւ գիտատեխնոլոգիական զարգացման Միջպետական կոմիտեի մասին 1995թ. նոյեմբերի 3-ի Կանոնադրության մեջ՝ գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմին ստեղծելու վերաբերյալ մասում, եւ շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

"1. Սույն Համաձայնագրի իրականացման համար Կողմերն ստեղծում են գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության Միջպետական խորհուրդ (ԳՏՆ ՄԽ), որն իրականացնում է իր գործունեությունը դրա վերաբերյալ՝ սույն Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող Կանոնադրության համապատասխան:

2. ԳՏՆ ՄԽ-ն մշակում է գիտատեխնիկական եւ նորարարության միջպետական տարածության ձևավորման հարցերը, որոշում գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության գերակա ուղղություններն ու ձևերը, իր իրավասության սահմաններում ընդունում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նախապատրաստում եւ սահմանված կարգով պետությունների ղեկավարների եւ ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների քննարկմանը ներկայացնում գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խնդիրների լուծմանն առնչվող փաստաթղթերի նախագծեր:

ԳՏՆ ՄԽ որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ եւ հիմք են համապատասխան հարցերի նախապատրաստման համար, որոնք քննարկվելու են սահմանված կարգով՝ ԱՊՀ բարձրագույն մարմինների կողմից":

## 2. Համաձայնագրի հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

"Հավելված

ԱՊՀ մասնակից պետությունների  
գիտատեխնոլոգիական ընդհանուր  
տարածություն ստեղծելու մասին  
1995 թ. նոյեմբերի 3-ի  
համաձայնագրին կից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության  
հարցերով Միջպետական խորհրդի

### I. Ընդհանուր դրույթներ

Գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության հարցերով Միջպետական խորհուրդը (այսուհետ՝ ԳՏՆ ՄԽ) ստեղծվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ստեղծելու մասին 1995 թ. նոյեմբերի 3-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում համագործակցության գործընթացների համակարգմանն աջակցելու նպատակով:

ԳՏՆ ՄԽ-ն հանդիսանում է ԱՊՀ ճյուղային համագործակցության՝ մշտական գործող համակարգող մարմին, որն իր գործունեությունն իրականացնում է Համաձայնագրի մասնակից պետությունների կողմից տրված լիազորությունների շրջանակում եւ հաշվետու է Անկախ Պետությունների Համագործակցության կառավարությունների ղեկավարների Խորհրդին եւ Տնտեսական խորհրդին:

Իր գործունեությունն իրականացնելիս ԳՏՆ ՄԽ-ն ղեկավարվում է Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրությամբ, Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ստեղծելու մասին 1995թ. նոյեմբերի 3-ի Համաձայնագրով, Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակում կնքված այլ միջազգային պայմանագրերով, պետությունների ղեկավարների Խորհրդի, ԱՊՀ կառավարությունների ղեկավարների Խորհրդի եւ Տնտեսական խորհրդի որոշումներով, ինչպես նաեւ սույն Կանոնադրությամբ:

### II. ԳՏՆ ՄԽ գործունեության հիմնական ուղղություններն ու գործառույթները

#### 2.1. ԳՏՆ ՄԽ գործունեության հիմնական ուղղություններն են.

գիտատեխնիկական եւ նորարարական քաղաքականության համակարգումն ամբողջությամբ եւ դրա առանձին բաղադրիչներով, Համաձայնագրի մասնակից պետություններում համատեղ

գիտատեխնիկական եւ նորարարական ծրագրերի ու նախագծերի աջակցության ֆինանսատնտեսական մեխանիզմների ձեւավորումը,

համագործակցության նոր ձեւերի զարգացման, այդ թվում՝ պետական աջակցության վերաբերյալ առաջարկությունների մշակումը, որոնք նպաստում են պետությունների գիտատեխնիկական եւ նորարարական ներուժի արդյունավետ օգտագործմանը համատեղ ծրագրերի իրականացման դեպքում,

ԱՊՀ մասնակից պետությունների գիտահետազոտական եւ նորարարական տեխնիկական կազմակերպությունների, գիտնականների եւ մասնագետների միջեւ ուղիղ կապերի զարգացման համար բարենպաստ պայմանների ձեւավորման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

## 2.2. ԳՏՆ ՄԻՍ հիմնական գործառույթներն են.

ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնիկական եւ նորարարական ներուժի վիճակի գնահատումը եւ մոնիտորինգի անցկացումը,

ԱՊՀ մասնակից պետությունների միջպետական գիտատեխնիկական եւ նորարարական համագործակցության զարգացման հետ կապված խնդիրների վերլուծությունը,

Համաձայնագրի մասնակից պետությունների գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության գերակա ուղղությունների որոշումը,

Համաձայնագրի մասնակից պետություններում գիտությանը, տեխնոլոգիային եւ նորարարությանը պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ ընդհանուր առաջարկությունների նախապատրաստումը,

ԱՊՀ մասնակից պետություններում միջպետական գիտատեխնիկական եւ նորարարական համագործակցության զարգացման վերաբերյալ ամենամյա զեկուցումների, ինչպես նաեւ այդ թեմային նվիրված այլ վերլուծական, տեղեկատվական եւ տպագիր հրատարակությունների նախապատրաստումը,

համատեղ գիտական հետազոտությունների եւ մշակումների համակարգումը դրանց անցկացմանը մասնակցող ԱՊՀ մասնակից պետությունների համաձայնության դեպքում:

## 2.3. ԳՏՆ ՄԻՍ-ն իր գործառույթներն իրականացնելու համար՝

ընդունում է որոշումներ այն իրավասությունների սահմաններում, որոնք տրամադրվել են ԳՏՆ ՄԻՍ անդամներին իրենց կառավարությունների կողմից,

նախապատրաստում եւ ԱՊՀ բարձրագույն մարմինների քննարկմանն է ներկայացնում գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության հարցերի վերաբերյալ փաստաթղթերի նախագծեր,

ուղարկում է հարցումներ ԱՊՀ մասնակից պետությունների գործադիր մարմիններին՝ պետությունների ղեկավարների Խորհրդի եւ ԱՊՀ կառավարությունների ղեկավարների Խորհրդի որոշումների, ինչպես նաեւ այն միջազգային պայմանագրերի կատարման վերաբերյալ տեղեկություն ստանալու համար, որոնց մասնակից են Համաձայնագրի մասնակից պետությունները՝ ԳՏՆ ՄԻՍ իրավասության սահմաններում գտնվող հարցերի առնչությամբ,

ստեղծում է գիտատեխնիկական եւ նորարարական համագործակցության առանձին կամ առավել կարեւոր ուղղություններով ժամանակավոր ստեղծագործական խմբեր եւ աշխատանքային մարմիններ: Դրանց գործունեության ֆինանսավորումն իրականացվում է ԱՊՀ մասնակից պետությունների գործադիր մարմինների առանձին որոշումով կամ դրանց գործունեության արդյունքներով շահագրգիռ ներդրողների կողմից,

հրավիրում եւ անցկացնում է լիակազմ նիստեր, իսկ առանձին հարցերով՝ աշխատանքային խորհրդակցություններ կամ աշխատանքային խմբեր՝ ԳՏՆ ՄԽ իրավասությանն առնչվող փաստաթղթերի նախագծերի մշակման համար,

գործում է՝ սերտորեն համագործակցելով ԱՊՀ ճյուղային համագործակցության այլ մարմինների, ինչպես նաեւ գիտությունների ակադեմիաների Միջազգային ասոցիացիայի հետ:

### III. ԳՏՆ ՄԽ աշխատանքների կազմակերպումը

3.1. ԳՏՆ ՄԽ կազմում ընդգրկվում են գործադիր իշխանության մեկական ներկայացուցիչ (ղեկավար կամ տեղակալ), որոնք ԱՊՀ մասնակից պետություններում պատասխանատու են գիտատեխնիկական եւ նորարարական զարգացման համար:

ԳՏՆ ՄԽ կազմում ընդգրկվում է նաեւ գիտությունների ակադեմիաների Միջազգային ասոցիացիայի ղեկավարը:

ԳՏՆ ՄԽ որոշմամբ նրա կազմում կարող են ընդգրկվել նաեւ ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

ԱՊՀ մասնակից պետությունների յուրաքանչյուր ներկայացուցիչ ունի մեկ ձայն:

Անհրաժեշտության դեպքում ԱՊՀ մասնակից պետությունների որոշմամբ ԳՏՆ ՄԽ աշխատանքներին կարող են մասնակցել գիտությունների ազգային (պետական) ակադեմիայի, ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմինների, գիտական շրջանակների, ինչպես նաեւ ԱՊՀ մասնակից պետությունների եւ երրորդ պետությունների ձեռնարկությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

3.2. ԳՏՆ ՄԽ-ն հաստատում է իր աշխատանքների կանոնակարգը:

3.3. ԳՏՆ ՄԽ նիստերն անցկացվում են Համաձայնագրի մասնակից պետություններում՝ հերթականությամբ: Նիստերի անցկացման համար ծախսերը կրում է Համաձայնագրի այն մասնակից պետության գործադիր իշխանության մարմինը, որի ներկայացուցիչը հանդիսանում է Խորհրդի անդամ, եւ որի տարածքում անցկացվում է նիստը (ընդունող կողմ): ԳՏՆ ՄԽ անդամների գործուղման հետ կապված ծախսերը կրում է Համաձայնագրի մասնակից ուղարկող պետությունը: ԳՏՆ ՄԽ նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, այն վայրում եւ ժամկետներում, որոնք որոշվում են ԳՏՆ ՄԽ կողմից՝ ընդունող կողմի առաջարկությամբ:

3.4. ԳՏՆ ՄԽ-ն ղեկավարում է նախագահը, որն ընտրվում է Համաձայնագրի մասնակից պետությունների գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչների թվից՝ ռոտացիայի

սկզբունքի հիման վրա: Նախագահության կարգն ու ժամկետները որոշվում են ԳՏՆ ՄԽ կողմից՝ դրա աշխատանքների կանոնակարգին համապատասխան: Նախագահը ղեկավարում է ԳՏՆ ՄԽ նիստերը, կազմակերպում դրա աշխատանքը նիստերի միջև և ընկած ժամանակահատվածում:

ԳՏՆ ՄԽ նախագահը կամ, նրա հանձնարարությամբ, ԳՏՆ ՄԽ անդամներից որեւէ մեկը մասնակցում է ԱՊՀ Տնտեսական խորհրդին կից՝ տնտեսական հարցերով Հանձնաժողովի նիստերին գիտատեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության փաստաթղթերի նախագծերի քննարկման դեպքում:

3.5. ԳՏՆ ՄԽ-ն ամեն տարի հաստատում է իր աշխատանքների պլանը, որոշում հարցերի քննարկման ժամկետներն ու կարգը:

3.6. ԳՏՆ ՄԽ-ն ամեն տարի զեկույց է ներկայացնում ԱՊՀ Տնտեսական խորհրդին կատարված աշխատանքների եւ գալիք տարում նախատեսված միջոցառումների վերաբերյալ:

3.7. ԳՏՆ ՄԽ գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծվում է գործադիր մարմին (աշխատակազմ):

Գործադիր մարմնի (աշխատակազմի) կանոնակարգն ընդունվում է ԳՏՆ ՄԽ կողմից՝ իր նիստի ժամանակ, եւ հաստատվում է ԱՊՀ Տնտեսական խորհրդի կողմից:

3.8. ԳՏՆ ՄԽ որոշումներն ընդունվում են.

համաձայնությամբ՝ գիտատեխնիկական եւ նորարարության համաձայնեցված քաղաքականության անցկացման վերաբերյալ առաջարկություններ նախապատրաստելիս եւ միջպետական գիտատեխնիկական եւ նորարարության տարածության ձեւավորման եւ գործունեության հետ կապված առաջարկություններ մշակելիս,

պարզ մեծամասնությամբ՝ ընթացակարգային հարցերի վերաբերյալ":

## ՀՈԴՎԱԾ 2

Մույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրող Կողմերի՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Այն Կողմերի համար, որոնք ներպետական ընթացակարգերն ավելի ուշ են կատարել, սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Կատարված է Յալթա քաղաքում 2009 թվականի նոյեմբերի 20-ին, ռուսերեն, մեկ բնօրինակով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը դրա վավերացված օրինակը կուղարկի սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության:

Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2014թ. ապրիլի 2-ին

Մոլդովայի Հանրապետության վերապահումը

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ստեղծելու մասին 1995 թ. նոյեմբերի 3-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության վերաբերյալ ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշման կապակցությամբ

20 նոյեմբերի 2009թ.

ք. Յալթա

"Մոլդովայի Հանրապետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի ներպետական ընթացակարգերի կատարումից հետո":

/ստորագրություն/

Վլադիմիր Ֆիլատ

Մոլդովայի Հանրապետության Վարչապետ

ՌԻկրահինայի վերապահումը

համաձայն ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստի օրակարգի 6.2 կետի

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ստեղծելու մասին 1995 թ. նոյեմբերի 3-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության վերաբերյալ

20 նոյեմբերի 2009թ.

"Բացառությամբ այն դրույթների, որոնք վերաբերում են գիտատեխնիկական եւ նորարարության քաղաքականության համակարգմանը կամ համաձայնեցմանը":

ՌԻկրահինայի վարչապետ,

պատվիրակության ղեկավար՝

/ստորագրություն/

Յու. Տիմոշենկո